



# ՆՈՐ ԿՈՐՈՒՄՏ ՄԸ՝ ԲԺ. ՅԱՐՈՒԹ ՆԻԿՈԼԵԱՆ

*Posted on March 17, 2021 by Keghart*



Category: [Opinions](#)



**ՊԵՂՈՒԹ**

Արթուն՝ Յարութ Նիկոլեանը իմ վաղնջագոյն «հերոսներես» մէկն էր Յովակիմեան-Մանուկեան վարժարանի առաջին իսկ օրերէն՝ 1959-60: Ան, քանի մը այլ Յովակիմեանցիներու հետ միասին, իմ նման շատերու համար եղած է օրինակելի երեք ընկեր մը, որուն կեանքը եղած է տեսակ մը ուղեցոյց:

Կը կիսեմ ցաւը իր տիկնոջ, ինծի լաւ ծանօթ Էմմային, քոյրերուն՝ Յասմիկին, Սոնիկին, եղբորը՝ Վարդգէսին (Վագօ) եւ Պեղրութի իր ընկերներուն: Ան տիպար ներդաշնակութիւն մըն էր սփիւռքահայ աշակերտի, ուսանողի, բժիշկի, գրիչի մարդու, բանաստեղծի, նկարիչի, յառաջադէմ, այլախոհ եւ ազատամիտ մտածող մտաւորականի:

Մեր սիրելի Արթուն առաջին իսկ օրէն յայտնեց իր համակրանքը եւ սատար կեցաւ իր վաղեմի բարեկամներուն ջանքերով հիմնուած [keghart.org](http://keghart.org)-ին ու ամէն գնով քաջալերեց անոր անխափան գործունեութիւնը:

Արթոյի կորուստով մասնիկ մը եւս կը պոկուի մեզմէ:

Դոկտ. Մինաս Գոճայեան  
[Keghart.org](http://Keghart.org)-ի խորհրդական  
4 Մարտ 2021

**ԲԺ. Յարութին Նիկոլեանի կորուստի ցաւը խոր կերպով կը զգանք [keghart.org](http://keghart.org)-էն ներս: Ստորեւ կը ներկայացնենք մեզի հասած բազմաթիւ ցաւակցական եւ սրտի խօսքերէն Ռոմէն Կոզմոյեանի ցաւակցական գիրը: Պրն. Ռ. Կոզմոյեան երկար տարիներու վաստակ ունի Խորհրդային Հայաստանի Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէէն ներս որպէս ղեկավար: Ան նաեւ ունեցած է դիւանագիտական ծառայութիւն ԽՍՀՄ-ի Լիբանանի դեսպանութենէն ներս՝ քաղաքացիական պատերազմի տարիներուն: ՀՀ անկախութենէն ետք Ռ. Կոզմոյեան հիմնեց իր «Կարաւան տուրզ» (Caravan Tours) ընկերութիւնը:**

Հեռախոսագանգը հայտնեց հերթական գույժը. ոչ ևս է Հարություն Նագուլյանը: Հոգեկան ինչ կերտվածքի տեր պետք է լինի այն մարդը, որն առաջին պահ կարողանա համատեղել Հարություն Նագուլյան և վախճան... Բայց ծնունդն ու մահը, ինչպէս ասում են, Աստծո գործն է:

Անհավատալի, անընդունելի, անհամատեղելի մի բան կա այս լուրի մեջ, բայց որքան էլ համարժեք բառեր փնտրես. Հարությունը չկա... հաշտվիր և վերջ:

Չկա ժպտերես ու հումորով լի «Նագուլը», կոչումով ու կրթությամբ բժիշկը, անաչառ վերլուծողն ու գնահատողը: Անսթաբիլ հայրենասերը, արվեստաբանը, արվեստագետը ու ճշմարտախոսը:

Հարությունին հաջողվեց վեր մնալ հատվածականության վարակից և թե՛ Սփյուռքում,  
թե՛ Հայրենիքում ունենալ իր՝ Նագույանական պատվանդանը:

Ցավակցում եմ նրանց՝ ով ճանաչել է, վայելել նրա առիքնող ներկայությունը, իսկ  
սիրելի Էմային հոգեկան ուժ ու կամք դիմակայելու վշտին:

Ռոմեն Կոզմոյան

10.03.2021

## Comments



**Vako** - 2021-03-15 20:30:16

Thank you Minas for the nice letter. Vako